Ասաց. «Կռիւ կ'անիմ, չեմ ի տայ»։

Կռիւ արեցին, շատ ղոշում սպանիցին. խաչապաշտ թագաւոր կոտրրուից։ Աղջիկ երդիկ[1]) կայնիր էր, ասաց. «Որ իմ խէրն իմանար, էսքան մեղք չէր ըցկի[2]) իմ շլինք, ինձ կ'տար»։

Խաչապաշտ թագաւոր լսաւ. լսաւ, ասեց. «Իս իմ աղջիկ կըտամ»։

Խաչապաշտ թագաւորին մէկ քեռսայ[3]) վարդըպետ կար, կնկան շոր խագցըրից, աղջկան հետ դրից, որ աղջկան տղայ էղնի, թոնդրան վրան կնքի։ Գնաց. մէ էրկու օր մնաց, կռապաշտ թագաւոր ասաց խաչապաշտ թագաւորի աղջկան. «Էս օր իս քե մէհվան[4]) իմ»։

Խաչապաշտ թագաւորի աղջիկ ասաց. «Էս օր մեր գիրքերին աչքեր իմ, որ մինչև քառասուն օր չ'թըմըմի, դիւ ինձ մէհվան չես ի կեայ»։

Քառասուն օր թամամից. աղջիկ դաստիւր[5]) առից, գնաց ծովի կրաղ[6]) սէյր անիլու։ Ասածու հրամանով ծով բացուից, մէ խամ ջիւր իրէ. բիւռ տուից, մէ ջիւր խմից, մէկէլ բիւռ կիսատ։ Իրէ տուն։

Թագաւոր ասաց. «Իս քե մէհվան իմ»։

Աղջիկ ասաց. «Ո՜ւ, իս մեր գիրքերին աչքիր իմ, մեր գիրքիր կ'ասին, մինչև ասանըմէկ ամիս չթամամի, դաստիւր չ'կայ մարդ կնկան մօտ էրթայ»։

Ասաց. «Որ ընցկուն ի, դիւ կայնի երդիկ, ինձ խետ խօսա, որ իմ սիրտ բացուի»։

Ժամանակ ըմ վրէն ընցաւ, աղջիկ իմացաւ, որ տղով ա. ակխաւ[7]), որ ծովից ա, ամա թագաւորին չը յայտնից։ Թագաւորն էլ ակխաւ։ Թագաւոր ասաց. «Իս[8]) քե մէհվան չեմ էկի, քիւ փոր լիքն ի, էս ի՞նչ բան ա»։

---

[1]) Լուսամուտ։ [2]) Զգի։ [3]) Գօշ, անմազ։ [4]) Հիւր։ [5]) Իրաւունք, հրաման։ [6]) Ափ։ [7]) Հասկացաւ։ [8]) Պէտք է կարդալ *եիս*։